



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 սեպտեմբերի 2012 թվականի N 1259 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 168-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները՝

1) որոշման 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ ենթակետով.

<<10) պատվիրատուներն իրենց կարիքների համար գնումներ կատարելու նպատակով կազմակերպված գնման գործընթացների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարությունները և հրավերները գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակում են ինքնուրույն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից սահմանված կարգով:>>.

2) որոշման 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին՝ մինչև 2012 թվականի դեկտեմբերի 30-ը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել պետական և մասնավոր հատվածների գործընկերության ծրագրերի գնահատման և հաստատման կարգը:».

3) որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ կետը առաջին նախադասությունից հետո լրացնել «Հրավերում և պայմանագրում հիմնական պայմանների ներառման, ինչպես նաև գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների պահպանման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն: Ընդ որում, գնման գործընթաց կազմակերպելիս պատվիրատուներն առաջնորդվում են լիազոր մարմնի սահմանած հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերով:» բառերով.

4) կարգի 12-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը «հիմնարկ,» բառից հետո լրացնել «բացառությամբ ՀՀ Նախագահի աշխատակազմի և ՀՀ կառավարության աշխատակազմի, որտեղ պատվիրատուի ղեկավարն աշխատակազմի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձն է» բառերով.

5) կարգի 17-րդ կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերությունում «ճանապարհի տվյալ հատվածն օգտագործող տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները» բառերը փոխարինել «այն տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, որոնց վարչական սահմաններում է գտնվում տվյալ ճանապարհի հատվածը» բառերով.

6) կարգի 28-րդ կետը «լրացումները» բառից հետո լրացնել «, պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում գնման ձևի փոփոխությունների հիմնավորումների հետ միասին,» բառերով.

7) կարգի 32-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետից հանել «անկախ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված մասնակիցների հետ կնքված շրջանակային համաձայնագրերում տվյալ գնման առարկան ներառված լինելու հանգամանքի» բառերը,

բ. 4-րդ ենթակետի աղյուսակում՝

- 27-րդ կետը <<փոստային>> բառից հետո լրացնել <<կապի>> բառով,

- 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<30. Հայաստանի Հանրապետության ջբանշանների, Հայաստանի Հանրապետության մեդալների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գերատեսչական մեդալների և դրանց տուփերի պատրաստում>>>,

- լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 35-րդ կետով.

<<35. ավիափոխադրում իրականացնող կազմակերպությունների պաշտոնական կայքերում հրապարակային օֆերտայով առաջարկվող ավիատոմսերի՝ էլեկտրոնային եղանակով ձեռքբերում>>>,

գ. 5-րդ ենթակետի <<ա>> պարբերությունից հանել <<և (կամ) այլ՝ արտակարգ ու չկանխատեսված հանգամանքների>> բառերը,

դ. 5-րդ ենթակետի <<բ>> պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<բ. պետական գնումների դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից անհետաձգելի և (կամ) հրատապ համարված այլ դեպքերում:

Ընդ որում, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից գնումն անհետաձգելի համարելու վերաբերյալ որոշում կարող է ընդունվել, եթե նման որոշման հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը կներկայացվեն տվյալ գնման առարկայի գծով առնվազն երեք մասնակիցների կողմից ստացված հայտերը և դրանց ուսումնասիրության արդյունքում պատվիրատուի կողմից առաջարկվող հաղթող մասնակիցը>>.

8) կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<հանձնաժողովը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, ովքեր նշանակվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով>>.

9) կարգի 35.3-րդ և 35.5-րդ կետերում «<մրցույթ>> բառը փոխարինել «<գնման ընթացակարգը>> բառերով.

10) կարգի 41-րդ կետի 2-րդ ենթակետը «<համաձայնագրեր կնքած>> բառերից հետո լրացնել «<բոլոր>> բառով.

11) կարգի 48-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:>>.

12) կարգի 53-րդ կետում`

ա. «<դեպքում>> բառից հետո լրացնել «<կամ եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները>> բառերով,

բ. 1-ին ենթակետում «<հաղթողին>> բառը փոխարինել «<առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին>> բառերով,

գ. 5-րդ ենթակետը «<գների>> բառից հետո լրացնել «<, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը>> բառերով.

13) կարգի 64-րդ կետի 1-ին ենթակետի «<զ>> պարբերությունը «<լիցենզիային>> բառից հետո լրացնել «<, մեքենա-սարքավորումներին>> բառերով.

14) կարգի 67-րդ կետում`

ա. «<մասնակիորեն>> բառը փոխարինել «<փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով>> բառերով,

բ. 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

<<Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.>>.

15) կարգի 71-րդ կետում՝

ա. <<ծառայությունների ծավալների կամ>> բառերից հետո լրացնել <<, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ>> բառերով,

բ. 1-ին ենթակետից <<կամ>> բառը հանել, իսկ <<նվազեցումը>> բառից հետո լրացնել <<կամ պայմանագրի գնի նվազեցման պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների ոչ համամասնորեն նվազեցումը, որի արդյունքում ավելանում է գնման առարկայի միավորի ձեռքբերման գինը.>> բառերով,

գ. 2-րդ ենթակետը <<քսան տոկոսը>> բառերից հետո լրացնել <<ինչպես նաև օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-6-րդ կետերով նախատեսված հիմքերով կնքված պայմանագրերով նախատեսված ապրանքների ծավալների ավելացումը>> բառերով,

դ. 3-րդ ենթակետը <<որոնք>> բառից հետո լրացնել <<միասին>> բառով,

ե. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<4) բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գնումների դեպքերի՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ժամկետը՝

ա. մինչև լրանալը ցանկացած ժամկետով մեկ անգամից ավելի ժամկետով երկարաձգումը,

բ. լրանալուց հետո ցանկացած ժամկետով երկարաձգումը.>>.

16) կարգի 73-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<73. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն իրավասու է պետության կարիքների համար կնքված պայմանագրերի, ինչպես նաև պետության համար պարտավորություններ առաջացնող գնման գործընթացների գծով ընտրանքային կարգով

իրականացնելու մոնիթորինգ, այդ թվում՝ պատվիրատուներից պահանջելու և ստանալու այդ գործարքներին առնչվող բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև ձեռնարկելու միջոցառումներ մոնիթորինգի արդյունքներով բացահայտված խնդիրների շտկման նպատակով գործողություններն իրականացնելու համար».

17) կարգի 74-րդ կետում և 75-րդ կետի 2-րդ ենթակետում <<չեղյալ>> բառը փոխարինել <<չկայացած>> բառով.

18) կարգի 75-րդ կետում <<Եթե սույն կարգով այլ բան նախատեսված չէ, ապա հայտի (հայտերի) ամբողջական և լիարժեք>> բառերը փոխարինել <<Որակավորումը հիմնավորող փաստաթղթերի>> բառերով.

19) կարգի 80-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1) մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները՝

Նախկինում կատարված պայմանագրերի		
առարկան	ծավալը՝ գումարային արտահայտությամբ (ՀՀ դրամ)	պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները
1	2	3
Տարեթիվը՝ թվական		
1.		
2.		
..		
Տարեթիվը՝ թվական		
1.		
2.		
..		
Տարեթիվը՝ թվական		
1.		
2.		
..		

>> ,

բ. 2-րդ կետում <<տարվան>> բառը փոխարինել <<տարվա և դրան>> բառերով,

20) կարգի 81-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից.>>.

բ. 2-րդ ենթակետում՝

- <<մինչև պայմանագրի կնքումը>> բառերը փոխարինել <<որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ>> բառերով,

- <<պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի>> բառերից հետո լրացնել <<սահմանված ժամկետում>> բառերով,

- <<հավաստումը>> բառը փոխարինել <<հավաստումը: Ընդ որում, համակարգչային և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման դեպքում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը մինչև պայմանագրի կնքումը ներկայացնում է գնման առարկայի իսկությունը (մատակարարված կամ մատակարարվելիք) հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի բնօրինակը և պատճենը:>> բառերով.

21) կարգի 82-րդ կետի 2-րդ ենթակետում <<մինչև պայմանագրի կնքումը>> բառերը փոխարինել <<որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ>> բառերով, իսկ <<ընտրված>> բառը՝ <<առաջին տեղը զբաղեցրած>> բառերով.

22) կարգի 83-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1) հրավերով պահանջվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը պետք է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերով ներկայացնի վարկային գծի տրամադրման մասին բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր կամ բանկի, վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության կողմից տրված երաշխիք: Ընդ որում, վարկային գծի կամ երաշխիքի չափը չպետք է պակաս լինի մասնակցի գնային առաջարկի տասը տոկոսից, իսկ գործողության ժամկետը չպետք է պակաս լինի պայմանագրի ամբողջ ծավալով կատարման վերջնաժամկետից՝ բացառությամբ պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետի:

Եթե գնումն իրականացվում է օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում, ապա վարկային գիծը կամ երաշխիքը ներկայացվում է միայն տվյալ ժամանակահատվածում գնում կատարելու համար մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի համար և միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանք, որպես հետագայում նախատեսվելիք ֆինանսական միջոցների մասով վարկային գծի կամ երաշխիքի տրամադրման ապահովում: Տուժանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի և տվյալ ժամանակահատվածում գնում կատարելու համար մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի տարբերության տասը տոկոսից>>.

23) կարգի 84-րդ կետի 2-րդ ենթակետի՝

ա. <<ա>> պարբերությունում <<մինչև պայմանագրի կնքումը>> բառերը փոխարինել <<որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ>> բառերով,

բ. <<ա>> և <<բ>> պարբերություններում <<ընտրված>> բառը փոխարինել <<առաջին տեղը զբաղեցրած>> բառերով.

24) կարգի 89-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով.

<<5) շրջանակային համաձայնագրերով՝ եթե գնման գործընթացը պարունակում է պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք>>.

25) կարգի 90-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետի <<բ>> պարբերությունում <<հրավերով>> բառը փոխարինել <<նախատրակավորման հայտարարությամբ>> բառերով,

բ. 5-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<6) գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախատրակավորված մասնակիցների ցուցակում ընդգրկված մասնակիցները, որոնց օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված նախատրակավորման ընթացակարգի արդյունքների մասին կազմված արձանագրության հետ միասին էլեկտրոնային կամ փաստաթղթային ձևով տրամադրվում է նաև հրավերը>>.

26) 94-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<2) նախատրակավորված մասնակիցների ցուցակի հաստատման օրվանից 5 օրացուցային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային կամ փաստաթղթային ձևով նախատրակավորված բոլոր մասնակիցներին նախատրակավորման ընթացակարգի արդյունքների մասին կազմված արձանագրության հետ միասին միաժամանակ տրամադրում է (ուղարկում) նաև հրավեր>>.

27) կարգի 95-րդ կետի՝

ա. 9-րդ ենթակետի <<բ>> պարբերությունում <<գնման հայտը>> բառերը փոխարինել <<երկրորդ փուլի հրավերը>> բառերով,

բ. 10-րդ ենթակետում <<գնման վերանայված հայտը>> բառերը փոխարինել <<երկրորդ փուլի հրավերը>> բառերով,

գ. 12-րդ ենթակետի <<բ>> պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<բ. որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ,>>

դ. 12-րդ ենթակետի <<դ>> պարբերությունում <<գնման վերանայված հայտով>> բառերը փոխարինել <<երկրորդ փուլի հրավերը>> բառերով,

ե. 13-րդ ենթակետում <<գնման>> բառը փոխարինել <<երկրորդ փուլի>> բառերով,

զ. 15-րդ ենթակետը <<սկզբունքով>> բառից հետո լրացնել << որի հետ օրենքի 9-րդ և 33-րդ հոդվածների համաձայն կնքվում է պայմանագիր>> բառերով.

28) կարգի 96-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետի <<բ>> պարբերությունում <<3-րդ մասով>> բառերը փոխարինել <<1-ին և 3-րդ մասերով>> բառերով,

բ. 5-րդ ենթակետի <<բ>> պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<բ. որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ,>>

զ. 11-րդ ենթակետը <<ընտրված մասնակից>> բառերից հետո լրացնել << որի հետ օրենքի 9-րդ և 33-րդ հոդվածների համաձայն կնքվում է պայմանագիր>> բառերով.

29) կարգի 109-րդ կետի 2-րդ ենթակետը <<աշխատանքային օրվա ընթացքում>> բառերից հետո լրացնել << բացառությամբ ավիասպասարկման ծառայությունների գնման, որոնց դեպքում հայտը կարող է ներկայացվել ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում և.>> բառերով.

30) կարգի 110-րդ կետում՝

ա. <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով>> բառերից հետո լրացնել <<Էլեկտրոնային եղանակով գնում կատարելու դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին>> N 1916-Ն որոշմամբ սահմանված պահանջները, իսկ փաստաթղթային ձևով>> բառերով,

բ. 5-րդ ենթակետը <<ապա>> բառից առաջ լրացնել <<բացառությամբ ավիասպասարկման ծառայությունների գնումների,>> բառերով,

գ. 5-րդ ենթակետի <<ա>> պարբերությունում <<հաղթողին>> բառը փոխարինել <<առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին>> բառերով,

դ. 5-րդ ենթակետի <<ե>> պարբերությունը <<գների,>> բառից հետո լրացնել <<որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը,>> բառերով,

ե. 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<7) սույն կարգի համաձայն և օրենքի 9-րդ և 33-րդ հոդվածներով նախատեսված կարգով ընտրված մասնակցի հետ կնքվում է պայմանագիր: Ընդ որում, ավիասպասարկման ծառայությունների գնման դեպքում անգործության ժամկետ կարող է չսահմանվել, ինչպես նաև բացառությամբ ավիասպասարկման ծառայությունների գնման և այն դեպքերի, երբ պատվիրատուի հետ պայմանագիր կնքող անձը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում, սպրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և ծառայության մատուցման ժամկետը պետք է սահմանվի առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագիր կնքելու օրվանից.>>,

զ. 8-րդ ենթակետի <<զ>> պարբերությունից հանել <<և չներկայացրած>> բառերը,

է. 8-րդ ենթակետի <<դ>> պարբերությունը <<գինը>> բառից հետո լրացնել <<՝ առանց ավելացված արժեքի հարկի և ավելացված արժեքի հարկի գումարը>> բառերով.

31) կարգի լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 110.1-ին, 110.2-րդ, 110.3-րդ, 110.4-րդ, 110.5-րդ, 110.6-րդ, 110.7-րդ, 110.8-րդ, 110.9-րդ, 110.10-րդ, 110.11-րդ, 110.12-րդ, 110.13-րդ և 110.14-րդ կետերով՝

<<110.1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառ-

ված գնման առարկաների դեպքում, եթե գնման գործընթացը պարունակում է պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք, ապա պատվիրատուի ղեկավարը՝

1) հաստատում է նախատրակավորման հայտարարության և հրավերի տեքստերը.

2) նշանակում է տվյալ գնման գործընթացի քարտուղար.

3) նախատրակավորման հայտարարության տեքստն ուղարկում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

110.2. Հրավերը գնման բնութագրեր չի ներառում, և գնման առարկան հրավերում նկարագրվում է ըստ դրա՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում նշված սահմանման:

110.3. Նախատրակավորման հայտարարության տեքստն ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը այն տեղադրում է՝ հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ միաժամանակ հեռուստատեսությամբ և ռադիոյով ապահովելով նախատրակավորման հայտարարության վերաբերյալ հիմնական տեղեկությունների հեռարձակումը:

110.4. Սույն կարգով սահմանված կարգով կազմակերպվում է նախատրակավորման ընթացակարգ:

110.5. Քարտուղարը՝

1) ապահովում է նախատրակավորման հայտարարության հրապարակումն առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող տպագիր մամուլում՝

ա. www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում տվյալ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում,

բ. յուրաքանչյուր ամսվա տասներորդ աշխատանքային օրվա ընթացքում.

2) կարող է ձեռնարկել լրացուցիչ միջոցներ հնարավոր մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման նպատակով նախատրակավորման հայտարարությունը՝

ա. հրապարակելով նաև զանգվածային լրատվության, այդ թվում՝ այլ էլեկտրոնային միջոցներով,

բ. սեփական նախաձեռնությամբ տրամադրելով (ուղարկելով) գնման գործընթացի հնարավոր մասնակիցներին:

110.6. Նախատրակավորված մասնակիցներին հրավերի տրամադրումից հետո գնման գործընթացին մասնակցելու ցանկություն ունեցող անձը, որպես հնարավոր մասնակից գրանցվելու նպատակով, պատվիրատուին է ներկայացնում գրանցման հայտ, որը ներառում է՝

1) գրավոր դիմում՝ հասցեագրված պատվիրատուի ղեկավարին.

2) հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր.

3) հայտի ապահովում՝ տուժանքի ձևով, որի չափը հավասար է գնումների բազային միավորին:

110.7. Գրանցման հայտը գնահատում է քարտուղարը՝ հրավերով սահմանված կարգով:

110.8. Գրանցման հայտը պատվիրատուին տրամադրվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում հրավերով սահմանված չափանիշներին՝

1) համապատասխանող մասնակցի հետ պատվիրատուն կնքում է շրջանակային համաձայնագիր, և մասնակիցը գրանցվում է պատվիրատուի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած անձանց ցուցակում.

2) չհամապատասխանող մասնակցի գրանցումը մերժվում է, որի մասին պատվիրատուն ծանուցում է գրանցման հայտ ներկայացրած մասնակցին՝ սպառիչ ձևով նշելով մերժման համար հիմք հանդիսացած բոլոր անհամապատասխանությունները:

110.9. Մերժման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունները շտկելու մտադրության դեպքում մասնակիցը գրանցման հայտ է ներկայացնում պատվիրատուին՝ սկզբնական գրանցումը մերժելու ծանուցման օրվան հաջորդող երեսուն օրացուցային օրվա

ընթացքում: Կրկին ներկայացված գրանցման հայտը քարտուղարի կողմից գնահատվում է դրանք ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝

1) կարող են ներկայացվել միայն այն փաստաթղթերը, որոնցում առկա են եղել անհամապատասխանություններ.

2) մասնակիցը ներկայացնում է հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի ու հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանության և գրանցումը մերժելու պահից հետո դրանց անփոփոխ մնալու մասին:

110.10. Կրկին ներկայացված գրանցման հայտը հրավերի պահանջները՝

1) համապատասխանող գնահատվելու դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում տվյալ մասնակցի հետ կնքում է շրջանակային համաձայնագիր, և մասնակիցը գրանցվում է պատվիրատուի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած անձանց ցուցակում.

2) չհամապատասխանող գնահատվելու դեպքում մասնակցի գրանցումը մերժվում է, որի մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է գրանցման դիմում ներկայացրած մասնակցին՝ սպառիչ ձևով նշելով մերժման համար հիմք հանդիսացած բոլոր անհամապատասխանությունները:

110.11. Սահմանված ժամկետում կրկին գրանցման հայտ չներկայացվելու կամ ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում տվյալ մասնակցի գրանցման գործընթացը դադարեցվում է: Մասնակիցը կարող է սույն կարգի համաձայն գրանցման նոր հայտ ներկայացնել:

110.12. Պատվիրատուի հետ շրջանակային համաձայնագիրը կնքելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում շրջանակային համաձայնագիր կնքած մասնակցի վերաբերյալ տվյալները և կնքված շրջանակային համաձայնագրի օրինակը:

110.13. Պատվիրատուի հետ կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսվում է նաև, որ՝

1) պատվիրատուի հետ կնքված շրջանակային համաձայնագիր կնքած մասնակցի կողմից հայտը ներկայացնելը պարտադիր չէ.

2) հայտը ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված յոթ աշխատանքային օրվա ընթացքում.

3) մասնակիցը կարող է դադարեցնել պատվիրատուի հետ կնքված շրջանակային համաձայնագիրը՝ դրա մասին գրավոր ծանուցելով պատվիրատուին: Համաձայնագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում համաձայնագրի հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Շրջանակային համաձայնագիրը դադարում է դրա վերաբերյալ դիմումը պատվիրատուին տրամադրվելու օրվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրը: Այդ ընթացքում պատվիրատուն գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը.

4) մասնակիցը պարտավոր է շրջանակային համաձայնագրի կնքելուց հետո օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և (կամ) հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր հատկանիշների փոփոխության (վատթարացման) դեպքում պատվիրատուին ներկայացնել շրջանակային համաձայնագիրը դադարեցնելու մասին դիմում: Մույն ենթակետի պահանջները չկատարելու, ինչպես նաև պայմանագրի կնքման առաջարկ ստանալու, սակայն պայմանագիր չկնքելու դեպքում՝

ա. մասնակիցը պարտավոր է պատվիրատուի համապատասխան ծանուցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս վճարել հայտի ապահովման չափով գումար, և՝

բ. մասնակցի հետ կնքված շրջանակային համաձայնագիրը լուծվում է:

110.14. Պատվիրատուի հետ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու դեպքում կիրառվում են սույն կարգով սահմանված պայմանները՝ հաշվի առնելով, որ էլեկտրոնային ծանուցումների փոխարեն պատվիրատուն ծանուցում է թղթային տարբերակով:».

32) կարգի 111-րդ կետում՝

ա. «օրենքի» բառից հետո լրացնել «9-րդ և» բառերով, իսկ «հողվածներով» բառից հետո՝ «և սույն կարգով» բառերով,

բ. 2-րդ ենթակետի «բ» պարբերությունում «3-րդ մասով» բառերը փոխարինել «1-ին և 3-րդ մասերով» բառերով,

գ. 5-րդ ենթակետի «գ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ,»>,

դ. 5-րդ ենթակետի «ե» պարբերությունն ուժը կորցրած ճանաչել,

ե. 7-րդ ենթակետից հանել «, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են» բառերը,

զ. 9-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

33) կարգի 112-րդ կետի՝

ա. 11-րդ ենթակետի «բ» պարբերությունում «գնման հայտը (վերջնական հայտը)» բառերը փոխարինել «երկրորդ փուլի հրավերը (վերջնական հրավերը)» բառերով,

բ. 12-րդ ենթակետում «վերջնական հայտը» բառերը փոխարինել «վերջնական հրավերը» բառերով,

գ. 14-րդ ենթակետի «գ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ,»>,

դ. 16-րդ ենթակետից «գնման» բառը հանել,

34) կարգի 121-րդ կետն առաջին նախադասությունից հետո լրացնել <<Ընդ որում, ապրանքների գնման դեպքում, բացառությամբ գյուղատնտեսական ապրանքների, գնման պայմանագիր կնքած անձը ներկայացնում է այդ ապրանքների ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Սակայն եթե այդ ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի կարող պահանջվել:>> բառերով.

35) կարգի 122-րդ կետի 5-րդ ենթակետում <<վերջին վճարումը>> բառերը փոխարինել <<վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից>> բառերով.

36) կարգի 128-րդ կետը <<գնահատվելուց հետո>> բառերից հետո լրացնել <<, եթե վերջինս ունի բարձրագույն կրթություն և առնվազն 3 տարվա մասնագիտական գործունեության փորձ>> բառերով.

2. Սահմանել, որ՝

1) <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով սահմանված պետական գնումների տարեկան հաշվետվությունը լիազոր մարմինը հրապարակում է մինչև հաջորդող տարվա մայիսի 1-ը.

2) գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումների կանխարգելման և բացահայտման նպատակով՝

ա. Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 25-ի N 317-Ս որոշմամբ հաստատված ուղեցույցում նկարագրված դեպքերի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման դեպքում պատվիրատուները 5 աշխատանքային օրվա ընթացքում դրանք տրամադրում են Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին,

բ. 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի համար ապահովում է տեխնիկական հնարավորություն օգտվելու Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գնումների վերաբերյալ առկա տեղեկատվական բազայից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին և 16-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում 2012 թվականի դեկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2012 թ. հոկտեմբերի 11
Երևան



Տ. ՍԱՐԳՍՅԱՆ